ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀ ԷԲՊՆ Սուբ-1

կանոնադրական նպատակների /խնդիրների իրագործման համար սուբսիդիաների տրամադրման

ք.Երևան «19» «հունվարի » 2015թ.

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ.Ղահրամանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Գ.Հովսեփյանի, որը գործում է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետով սահմանված ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ծառայությունների արդյունքների հիման վրա Կատարողին տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հավելվածով սահմանված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 04 խմբի 01 դասի «Պետական աջակցություն «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին» ծրագրով (այսուհետ Ծրագիր) նախատեսված սուբսիդիայի գումարը:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով նախատեսված Ծրագրի կատարողական չափորոշիչներին համապատասխան, որում ամրագրված Ծառայությունների ծավալները /մատուցման պարբերականությունը/ բնութագրող բնեղեն ցուցանիշները համարվում են սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող Ծառայությունների առավելագույն քանակ:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի Ծառայությունների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված ժամանակացույցով:

2. Կատարողի միջոցներով Ծառայությունների մատուցումը

2.1. Ծառայությունները մատուցվում են Կատարողի ուժերով, նյութերով և միջոցներով:
2.2. Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցված Ծառայությունների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի մատուցած Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
3.1.2. Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամանակացույցով սահմանված ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայությունների մատուցման նոր ժամկետներ և Կատարողի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ:
3.1.3. Չընդունել Ծառայությունների արդյունքը՝ սույն պայմանագրի 1.2. կետով նախատեսված Ծրագրի կատարողական չափորոշիչներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով Կատարողի կողմից թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ:

3.1.4. Լիազորել այլ անձի՝ Ծառայությունների մատուցման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կատարողին.

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Ծառայությունները մատուցելիս՝ աջակցել Կատարողին սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար:

3.2.2. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունները /դրա արդյունքը/, իսկ պայմանագրից Ծառայությունների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Ծառայություններում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ հայտնաբերումից 1 ամսվա ընթացքում ձեռնարկել համատեղ միջոցներ թերությունները վերացնելու համար:

3.2.3. Սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետում, Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում, Կատարողին հատկացնել վերջինիս տրամադրման ենթակա սուբսիդիայի գումարը:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. Սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետում Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների կատարման դիմաց Պատվիրատուից պահանջել հատկացնելու սույն պայմանագրի 5.1. կետով նախատեսված՝ տրամադրման ենթակա սուբսիդիայի գումարը:

3.3.2. Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել հատկացնելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումը ստանալու պահը մատուցված Ծառայություններին համարժեք սուբսիդիայի գումար:

3.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.1. կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել հատկացնելու իրեն տրամադրման ենթակա սուբսիդիայի գումարները, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. Ծառայությունները մատուցել սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում՝ պատշաճ որակով, չգերազանցելով սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով նախատեսված ծախսերի տարեկան սահմանագումարները:

3.4.2. Կատարել Ծառայությունների վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3. Ապահովել Ծառայությունների մատուցումը սահմանված նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան:

4. Ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

4.1. Կատարողը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը Պատվիրատուին է ներկայացնում հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածում սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման մասին՝ Պատվիրատուի կողմից սահմանված ձևով:
Ծառայությունների ընդունումն իրականացվում է Կատարողի կողմից ներկայացվող հաշվետվության, ինչպես նաև Պատվիրատուի կողմից սահմանված այլ փաստաթղթերի հիման վրա:
Պատվիրատուն սույն կետում նշված հաշվետու փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է Կատարողին ուղարկել/կամ հայտնել Ծառայությունների ընդունման մասին եզրակացությունը կամ դրա պատճառաբանված մերժումը:
Կատարողի կողմից ավարտված Ծառայությունները կամ առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում Ծառայությունների ընդունման մասին դրական եզրակացություն տալու պահից:

4.2. Ծառայությունների կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները սույն պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում կազմվում է երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ մատուցման ենթակա լրացուցիչ Ծառայությունները և ժամկետները:

Կատարողը պարտավոր է պայմանագրով տրամադրման ենթակա սուբսիդիայի գումարի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, մատուցել անհրաժեշտ Ծառայությունները:

4.3. Եթե Ծառայությունների ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական ցուցանիշների և նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոխել Ծառայությունների առանձին պայմանները, ապա այդ Ծառայությունները մատուցվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և սուբսիդիայի գումարը:

5. Սուբսիդիայի գումարը և դրա տրամադրման կարգը

5.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայությունների դիմաց << պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի առավելագույն չափը սահմանվում է **12838800 /տասներկու միլիոն ութ հարյուր երեսունութ հազար ութ հարյուր/ << դրամ**, որը ներառում է Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման համար իրականացվող բոլոր ծախսերը:

Սույն պայմանագրի համաձայն մատուցվող Ծառայությունների նվազագույն շահավետ գները սահմանվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով նախատեսված Ծրագրի կատարողական չափորոշիչներին համապատասխան:

Սույն պայմանագրի համաձայն սուբսիդիայի գումարները Կատարողին տրամադրվում են հաշվետու եռամսյակի առաջին և երկրորդ ամսվա համար բյուջետային ծախսերի նախահաշվով (Ծրագրով) տվյալ եռամսյակի համար նախատեսված և այդ եռամսյակի առաջին ու երկրորդ ամսվա համար փաստացի վճարված սուբսիդիայի գումարների տարբերության չափով, այդ թվում՝ հաշվետու եռամսյակի՝

- առաջին և երկրորդ ամսվա համար դրանք հատկացվում են կանխավճարի տեսքով,
- երրորդ ամսվա համար հասանելիք սուբսիդիայի գումարը հատկացվում է սույն պայմանագրի 4.1. – 4.3. կետերի համաձայն Ծառայությունների ընդունումից հետո, փաստացի մատուցված և ընդունված Ծառայությունների ծավալներին համապատասխանող չափով՝ հաշվի առնելով սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով նախատեսված Ծառայությունների մատուցման գները, ինչպես նաև սույն պայմանագրի 5.2. ենթակետում ամրագրված դրույթները:

5.2. Եթե Կատարողի կողմից տարվա կտրվածքով մատուցված Ծառայությունների՝
ա/ փաստացի ծավալները գերազանցում են սույն պայմանագրի 1.2. կետով նախատեսված սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող Ծառայությունների առավելագույն քանակը, որի արդյունքում տարվա կտրվածքով սույն պայմանագրի 5.1. կետի համաձայն հաշվարկված վճարման ենթակա սուբսիդիայի գումարը գերազանցում է սույն պայմանագրի 5.1. կետում նշված սուբսիդիայի առավելագույն չափը՝ սուբսիդիայի փաստացի տրամադրումը կատարվում է սուբսիդիայի վերոգրյալ առավելագույն չափի սահմաններում,
բ/ փաստացի ծավալները չեն գերազանցում սույն պայմանագրի 1.2. կետով նախատեսված սույն պայմանագրի շրջանակներում կատարվող աշխատանքների առավելագույն քանակը, որի արդյունքում տարվա կտրվածքով սույն պայմանագրի 5.1. կետի համաձայն հաշվարկված վճարման ենթակա սուբսիդիայի գումարը պակաս է լինում սույն պայմանագրի 5.1. կետում նշված սուբսիդիայի առավելագույն չափից՝ սուբսիդիայի տրամադրումը կատարվում է՝

- սույն պայմանագրով սահմանված սուբսիդիայի առավելագույն չափով, եթե Կատարողը ներկայացնում է սուբսիդիայի առավելագույն չափին համապատասխանող և /կամ/ գերազանցող գումարի չափով փաստացի կատարված ծախսերը հիմնավորող համապատասխան սկզբնական և այլ փաստաթղթեր: Եթե ներկայացված փաստաթղթերով հիմնավորված փաստացի ծախսերը փոքր են լինում սույն պայմանագրով սահմանված սուբսիդիայի սռսվելագույն չափից, ապա սուբսիդիայի տրամադրումը կատարվում է վերոգրյալ փաստացի ծախսերի չափով, բայց ոչ պակաս սույն պայմանագրի 5.1. կետի համաձայն հաշվարկված սուբսիդիայի գումարից,
- սույն պայմանագրի 5.1. կետի համաձայն հաշվարկված սուբսիդիայի գումարի չափով, եթե Կատարողը չի ներկայացնում փաստացի կատարված ծախսերը հիմնավորող համապատասխան սկզբնական և այլ փաստաթղթեր:

5.3. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 4.3. կետով նախատեսված Ծառայությունների կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու պահից 20 բանկային օրվա ընթացքում տրամադրելու Կատարողին սուբսիդիայի գումարը փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց, բայց ոչ ավելի, քան սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով՝ Վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված վճարման չափից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և շարունակում է գործել մինչև կողմերի բոլոր պարտավորությունների լրիվ կատարումը: Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի , առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ
ք.Երևան 10 Հանրապետության Հրապարակ	ք.Երևան, Չարենցի 46
Կառավարական տուն 2	
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	Հայէկոնոմբանկի Մյասնիկյանի մ/ճ
h/h 9000011009223	h/h 163038107047
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար	«ՀԵՖ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Կ.Ղահրամանյան	Գ.Հովսեփյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված թիվ 1
«19» «հունվարի » 2015թ.
կնքված թիվ 1
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության
ՍՈՒԲ-1 պայմանագրի

Պատվիրատու
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարություն
ք.Երևան 10 Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 2
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
հ/հ 9000011009223
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության
աշխատակազմի ղեկավար
Կ.Ղահրամանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«Հանրապետական երկրաբանական
ֆոնդ» ՊՈԱԿ
ք.Երևան, Չարենցի 46

Հայէկոնոմբանկի
Մյասնիկյանի մ/ճ
հ/հ 163038107047
«ՀԵՖ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Գ.Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

N ՀՀ ԷԲՊՆ ՍՈՒԲ - 1 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը				
1073	ԱԾ 01	Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն				
		Նկարագրություն				
		1.ՀՀ-ում օգտակար հանածոների հանքավայրերի մասին տեղեկատվության տրամադրում պետական մարմիններին և այլ կազմակերպություններին և կադաստրի վարում; 2.Ընդերքի մասին տեղեկատվության և ֆոնդային նյութերի տրամադրում; 3.Երկրաբանահետախուզական աշխատանքների պետական հաշվառում; 4.Օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների հաշվառում և գրանցում				
Չափորոշիչներ			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	2015տարեկան
Քանակական		Ենթակա տարածքների տեղադիրքի ստուգում ըստ ուսումնասիրության թույլտվություններով տրված կոորդինատների, աշխատանքային նախագծերի ստուգում, պետական հաշվառում, ուսումնասիրությունների թիվը	25	69	109	126
Ժամկետայնության		Ընթացիկ տարվա 1-4 եռամսյակում				
		Ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի,	480	485	492	495

Քանակական	լեռնահատկացման ակտերի պատճենների գրանցում և պահպանում, փաստաթղթերի թիվը				
ժամկետայնության	Ընթացիկ տարվա I – IV եռամսյակներ				
Քանակական	Ընդերքօգտագործողների կողմից ներկայացված օգտակար հանածոների պաշարների հաշվետու հաշվեկշիռների վերաբերյալ 5-ՕՀՊՀ հաշվետվությունների գրանցում և պահպանում, հաշվետվությունների թիվը	472	472	472	472
ժամկետայնության	Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում				
Քանակական	Հաշվառման մեջ գտնվող հանքավայրերի և հանքերևակումների անձնագրերի ստուգում, հաշվառում և նոր հաստատված պաշարներով հանքավայրերի, կանխատեսումնային պաշարներով նոր ուսումնասիրված հանքերևակումների անձնագրերի կազմում, հաշվառում ու գրանցում, օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների տեղեկատվական հենքի ստեղծում, օգտակար հանածոների ուսումնասիրության, օգտագործման և պահպանության ոլորտում միասնական պետական ռազմավարություն իրականացնելու համար, անձնագրերի թիվը	1423	1428	1436	1444
ժամկետայնության	Ընթացիկ տարվա 4-րդ եռամսյակում				
	Օգտակար հանածոների հանքավայրերում պաշարների շարժի և մնացորդային պաշարների գրանցում, նոր հաստատված հանքավայրերի պաշարների ավելացում և օգտակար հանածոների հանքավայրերի մեկ ընդհանուր հաշվեկշռի կազմում՝ ըստ օգտակար հանածոների տեսակների, հաշվեկշիռների թիվը	844	847	851	857
ժամկետայնության	Ընթացիկ տարվա I – IV եռամսյակներ				
	Սահմանված կարգով երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների հանքավայրերի և դրանց պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության նյութերի ընդունում, ստուգում, հաշվառում և գրանցում համապատասխան գրանցամատյաններում ըստ առանձին գույքագրման համարների, նյութերի թիվը	581	599	612	620
ժամկետայնության	Ընթացիկ տարվա I – IV եռամսյակներ				
	ՀԵՖ ՊՈԱԿ-ի այցելուներին ֆոնդային նյութերի տրամադրում համաձայն ներկայացված հայտերի /անվճար ծառայություններ/, նյութերի թիվը	157	347	549	688
ժամկետայնության	Ընթացիկ տարվա I – IV եռամսյակներ				
Որակական					
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը		2568.0	5778.0	8988.0	12838.8

Աղյուսակ N 1

Մատուցվող ծառայությունների տեխնիկական բնութագիրը և նվազագույն շահավետ գինը

2015թ. թվականին իրականացման ենթակա ծառայությունների անվանումը	Չափի միավորը	Ծառայության ծավալը	Պահանջվող աշխատատարությունը /մարդ/օր/		Պետական պատվերի կատարման գինը	
			միավոր ծավալի համար	պետական պատվերի կատարման համար	Ընդհանուրը /հազ.դրամ/	Միավորի համար /դրամ/
Ենթակա տարածքների տեղադիրքի ստուգում ըստ ուսումնասիրության թույլտվություններով տրված կոորդինատների, աշխատանքային նախագծերի ստուգում, պետական հաշվառում, ուսումնասիրությունների թիվը	աշխատանք	126	1.3	163.8	486.5	3861.3
Ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի, լեռնահատկացման ակտերի պատճենների գրանցում և պահպանում, փաստաթղթերի թիվը	հատ	495	0.5	247.5	735.1	1485.1
Ընդերքօգտագործողների կողմից ներկայացված օգտակար հանածոների պաշարների հաշվետու հաշվեկշիռների վերաբերյալ 5-ՕՀՊՀ հաշվետվությունների գրանցում և պահպանում, հաշվետվությունների թիվը	հատ	472	0.6	283.2	841.2	1782.1
Հաշվառման մեջ գտնվող հանքավայրերի և հանքերևակումների անձնագրերի ստուգում, հաշվառում և նոր հաստատված պաշարներով հանքավայրերի, կանխատեսումնային պաշարներով նոր ուսումնասիրված հանքերևակումների անձնագրերի կազմում, հաշվառում ու գրանցում, օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների տեղեկատվական հենքի ստեղծում, օգտակար հանածոների ուսումնասիրության, օգտագործման և պահպանության ոլորտում միասնական պետական ռազմավարություն իրականացնելու համար, անձնագրերի թիվը	հատ	1444	0.8	1155.2	3431.2	2376.2
Օգտակար հանածոների հանքավայրերում պաշարների շարժի և մնացորդային պաշարների գրանցում, նոր հաստատված հանքավայրերի պաշարների ավելացում և օգտակար հանածոների հանքավայրերի մեկ ընդհանուր հաշվեկշռի կազմում՝ ըստ օգտակար հանածոների տեսակների, հաշվեկշիռների թիվը	հատ	857	1.6	1371.2	4072.8	4752.4

Սահմանված կարգով երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների հանքավայրերի և դրանց պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության նյութերի ընդունում, ստու-գում, հաշվառում և գրանցում համապատաս-խան գրանցամատյաններում ըստ առանձին գույքագրման համարների, նյութերի թիվը	հատ	620	1.0	620.0	1841.5	2970.2
ՀԵՖ ՊՈԱԿ-ի այցելուներին ֆոնդային նյութերի տրամադրում համաձայն ներկայացված հայտերի /անվճար ծառայություններ/, նյութերի թիվը	հատ	688	0.7	481.6	1430.5	2079.2
ԸՆԴԱՄԵՆԸ	X	X	X	4322.5	12838.8	X
Նվազագույն շահավետ գինը ամբողջ ծավալի համար	հազ.դրամ	X	X	12838.8	X	X
Նվազագույն շահավետ 1 մարդ/օրվա համար	դրամ	X	X	2970.2	X	X

Հավելված թիվ 2
,,19,, հունվարի 2015թ.
կնքված թիվ 1
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության
ՍՈՒԲ-1 պայմանագրի

Պատվիրատու
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարություն
ք.Երևան 10 Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 2
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
հ/հ 9000011009223
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության
աշխատակազմի ղեկավար
Կ.Ղահրամանյան

Կ.Տ.
(ստորագրություն)

Կատարող
«Հանրապետական երկրաբանական
ֆոնդ» ՊՈԱԿ
ք.Երևան, Չարենցի 46

Հայէկոնոմբանկի
Մյասնիկյանի մ/ճ
հ/հ 163038107047
«ՀԵՖ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

Գ.Հովսեփյան

Կ.Տ.
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N ՀՀ ԷԲՊՆ ՍՈՒԲ - 1 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԻ

Ծառայության անվանումը	Ծառայության մատուցման համար տրամադրվող բյուջետային հատկացումների/ սուբսիդիայի ընդհանուր գումարը (հազ.դրամ)	Ֆինանսավորման գումարը 2015 թվականի ընթացքում ըստ եռամսյակների (հազ.դրամ)			
		1-ին եռամսյակ	6 ամիս	9 ամիս	Տարի
«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կանոնադրական նպատակների/խնդիրների իրագործում	12838.8	2568.0	5778.0	8988.0	12838.8

Հավելված թիվ 3
,,19,, հունվարի 2015թ.
կնքված թիվ 1
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության
ՍՈՒԲ-1 պայմանագրի

Պատվիրատու
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարություն
ք.Երևան 10 Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 2
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
հ/հ 9000011009223
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության
աշխատակազմի ղեկավար
Կ.Ղահրամանյան
Կ.Տ.
(ստորագրություն)

Կատարող
«Հանրապետական երկրաբանական
ֆոնդ» ՊՈԱԿ
ք.Երևան, Չարենցի 46

Հայէկոնոմբանկի
Մյասնիկյանի մ/ճ
հ/հ 163038107047
«ՀԵՖ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Գ.Հովսեփյան
Կ.Տ.
(ստորագրություն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ՀՀ ԷԲՊՆ ՍՈՒԲ - 1 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԻ

հ/հ	Ծառայությունների անվանումը	ժամկետը
1.	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կանոնադրական նպատակների/խնդիրների իրագործում	01.01.2015թ. – 31.12.2015թ.